ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Միհրան Դաբաղ[*]

Կարլ Մարքսը մի անգամ ասել է. «Շահը հիշողություն չունի, քանի որ մտածում է միայն իր մասին» [1]: Ով ինքն իրեն չի հիշում, ով այդպիսով մոռանում է իր սեփական գործողությունների պատմական նախադրյալները, նա կարող է սեփական շահը հետապնդել անզիջում և առանց հետևանքները նկատի առնելու:

Հիշողությունից զուրկ լինելը, ըստ այդմ, քաղաքական և պատմական առնչություններում նշանակում է *զուրկ լինել խղճից:* Կարելի է պայմանականորեն ասել, որ միայն հիշողության ազատագրումն է բացում քաղաքական գործունեության տարածքներ, քանի որ այն ձերբազատում է պատմական պատասխանատվությունից:

Պատմության հետ քաղաքական հարաբերման այնպիսի սկզբունքը, որտեղ հաշվի են առնվում միայն առաջադիմությունն ու հաջողությունը, իսկ զոհերն անտեսվում են, խստորեն քննադատել է գերմանաբնակ հրեա Վալտեր Բենիամինն իր վերջին աշխատության՝ 1939թ. գրած պատմափիլիսոփայական ուսումնասիրության մեջ:

«Հաղթողին հասկացողություն ցույց տալը նպաստավոր է իշխողներին», նշում էր Վալտեր Բենիամինը, քանի որ, «ըստ հանգամանքների՝ իշխողները բոլոր նրանց ժառանգորդներն են, որոնք

[*] Դոկտոր պրոֆեսոր, Բոխում (Գերմանիա):

երբևէ հաղթել են» [2]: Պատմության մեջ շահողների հետ քաղաքականության դաշինքն է, որ Վալտեր Բենիամինը գիտակցել և քննադատաբար լուսաբանել է: Նա կոչ էր անում վերջապես փոխել մոտեցումները և հայացքն ուղղել պատմության մեջ պարտվածների՝ զոհերի վրա, այսինքն՝ նրանց, որոնց վրայով է անցել իշխողների ցնծության երթը:

Պատմությունն, այսպիսով, հաղթողի պատմությունն է: Նա ունի մենաշնորհ աղբյուրները կարգավորելու, հասկացություններ և կատեգորիաներ ստեղծելու, տեղի ունեցածը պարզաբանելու հարցում: Նա կարող է *գրել* պատմության իր վարկածը (*version*) և, ըստ այդմ, նաև *ամրագրել:* Դրան հակառակ՝ պարտվողի ձայնին կարծես որևէ արժեք չի տրվում: Պատմության նրա մեկնակերպը չեն լսում, նա դատապարտված է լռելու: Քաղաքական ուժերի հարաբերակցության հիման վրա, որոնք ձեռք են բերվել բռնությամբ, պարտվածներն իրենց պատմությունը պատմելու կամ նույնիսկ գրելու որևէ կարելիություն չունեն:

Պետական իրավունքի հայտնի մասնագետ, գերմանացի Կարլ Շմիդտն այդ իրադրությունը 1919թ. իր *«Die Buribunken»* սատիրայում ցինիկաբար հետևյալ կերպ է ձևակերպել. «Զարգացման անիվը լռելյայն անցնում է լռողի վրայով: Նրա մասին այլևս չի խոսվում, և նա այդ պատճառով այլևս չի կարող իրեն դրսևորել» [3]:

Բրիտանացի պատմաբան Պետեր Բուրկեն առաջատար հաղթողների պատմության ավանդույթին անդրադարձ կատարելիս ուշադրություն է հրավիրել երկու գործոնների, այն է՝ հաղթողների կողմում *պատմագրության* և *պատմության մոռացության* խաչաձևման, և մյուս կողմում՝ պատմություն գրելու և պատմությունը հիշելու զանազանության վրա: Սկզբում անդրադառնանք պատմագրության և պատմության մոռացության առնչությանը. հաղթողների կողմից պատմության շարադրումը նշանակում է՝ անցյալն ըմբռնել

որպես ավարտված և պարզաբանված գործընթաց, որից, իբրև պարզաբանված իրողությունից, այլևս ձերբազատվում են: Անցյալը կարող է *մոռացվել,* եթե նրան արդի գործունեության համար այլևս չպետք է կողմնորոշիչ նշանակություն տրվի [4]:

Ահա հենց այստեղ վճռորոշ տարբերությունը հաղթողների կողմից պատմությունը շարադրելու գործընթացի և պարտվածների ու զոհերի կողմից պատմությունը հիշելու միջև, քանի որ պատմության մեջ պարտվողների համար, նշում է Բուրկեն, անհնար է տեղի ունեցածն ընդունել. նրանք դատապարտված են պեղել տեղի ունեցածը, այն վերարտադրել և արտացոլել այլընտրանքները [4, S. 297]:

Պարտվածների և զոհերի համար պատմությունը շարունակ այժմեական է մնում. այն ավարտված չէ, այլ շարունակում է կողմնորոշիչ մնալ ներկայում գործելու համար: Այսպիսով՝ այն, ինչ մնում էր պարտվածներին և զոհերին, իրենց հիշողություններն էին, որ նրանք, որպես իրավազրկված և ճնշված զոհեր, կարողանում էին արթուն պահել, սակայն հաղթողների առաջատար պատմության մեջ դրանք որևէ տեղ չէին գտնում: Այս առնչությամբ մեծ նշանակություն ունի մի երկրորդ տեսակետ, որն ակամա թափանցում էր իմ նախընթաց խորհրդածություններում. «Հաղթողների» և «պարտվողների» առադրման կողքին կարելի է նկատի առնել «ոճրագործների» և «զոհերի» առադրումը: Միաժամանակ պետք է սկզբում մատնանշել, որ զոհի կատեգորիան նշանակության երկու տարբեր ընդգրկումներ ունի, որոնք լատինական հասկացություններում կոչվում են *sacrificium* և *victimus* (անգլերեն՝ *sacrifice* և *victim*) [5]. *Sacrificium* հասկացությունն ի սկզբանե մատնանշում է կրոնական զոհին, հավատի համար կատարվող ինքնազոհաբերությունը կամ մարտիրոսությունը: Այդ հասկացությունը ներառվել է ազգային պատմագրության համատեքստում՝ որպես մի նոր սուրբ իրողության՝ *հայրենիքի* կամ *ազգի* համար կատարված նահատակություն:

Եթե *sacrificium* հասկացությունում կենտրոնական է սեփական կյանքի ինքնորոշիչ, ակտիվ ներդրումը կրոնական կամ հերոսական իմաստով՝ հավատի, հայրենիքի, ազգի համատեքստում, ապա *victimus* հասկացությունը բնութագրում է բռնության պասիվ և անպաշտպան զոհին: Մեր քննության տեսանկյունից միաժամանակ առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ պատմության մեջ զոհերի այդ երկու տեսակներից միայն մեկի համար հիշողության առանձնահատուկ ձև, հստակ շրջանակ կար: *Sacrificium*-ին, մասնավորապես, համապատասխանում է կրոնական կամ ազգային իմաստաբանության հերոսական ներկայացումը, որն իր մեջ ներառել է նաև նահատակության կրոնական ընկալումը [5, S. 74f]: Ըստ այդմ՝ հաղթողների ինքնազոհաբերումը, սակայն նաև պարտվածների ինքնազոհաբերումը ըմբռնվում է որպես «մահ ինչ-որ բանի համար»: Դա երևան է գալիս որպես ինքնաբավ ընծա հանրությանը, հայրենիքին: Այդ *ինչ-որ բանի համար զոհը* հանրության և հետնորդների կողմից հիշվում է ակնածանքով. նրա ինքնազոհաբերումը հատուցվում է մեծարանքով և փառքով:

Սա որևէ ընդհանրություն չունի *victimus*-ի՝ խիստ անհամաչափ բռնության իրադրությունում ի հայտ եկած անտեսված զոհի հետ, որը որոշակիորեն համարվում է պատմական գործընթացների անիմաստ ածանցյալ կորուստ. ստրկության զոհերը, Աֆրիկայում և Նոր աշխարհում եվրոպական զավթողական քաղաքականության հետևանքով սպանված տեղաբնիկ բնակչության խմբերը, հայերի, եվրոպական հրեաների և գնչուների ցեղասպանությունների զոհերը, ինչպես նաև աշխարհում ամենուր հետապնդված ու սպանված բազմաթիվ այլ քաղաքացիները: Այդ զոհերի համար չկային հիշողության ոչ մի դաշտ և եղանակ: Նրանք պատմության մեջ որևէ տեղ չունեին:

Փաստորեն, այնպես է, որ անտեսված զոհերի փորձառությունը հնարավոր չէ քննել փորձառության դիտարկման և հիշողության՝

պատմության մեջ հաստատված հերոսական ձևերի միջոցով: Նույնիսկ քրեաբանորեն ճանաչված զոհի համար չկան հաստատված և մշակութային նկարագիր ստացած որևէ «այցեքարտ» ու հիշողության ավանդույթ:

Հիշողության ուսումնասիրող Ալեիդա Ասմանը հստակ «այցեքարտի» բացակայության պատճառը համարում է այն, որ անտեսված զոհերի փորձառությունը հաճախ տվյալ պատմական իրողությունից միայն տասնամյակներ և հարյուրամյակներ անց է կարողանում հասարակական ճանաչում ստանալ և կոլեկտիվ կամ մշակութային հիշողության մաս դառնալ: Դա, ըստ Ասմանի, հիմնականում կախված է այն բանից՝ արդյոք զոհերի խմբին հաջողվու՞մ է զարգացնել սերունդներ հաղթահարող վերհուշ [5, s. 76-81]:

Հաճախ ասքապատումների մեջ միայն հերոսներն են մեծարվում ու այսպիսով ամրագրվում: Հոլոքոստի դեպքում հրեական հիշողության առանցքը սկզբնապես երկար ժամանակ հանդիսանում էր Վարշավայի գետոյում տեղի ունեցած ապստամբությունը: Հերոսական զոհերի դեպքում ճանաչումն ավելի հեշտ է, որովհետև նրանց հիշատակն ունի ամուր և հաստատված և, ըստ այդմ՝ դյուրին ընդունելի շրջանակներ:

Անտեսված զոհերի հիշողությունը պահպանելու համար, սակայն, անհրաժեշտ է ունենալ համապատասխան շրջանակ, որը նախ պետք է ստեղծել, իսկ դրա համար անհրաժեշտ է այդ փորձառությունը կրողների շրջանի ընդլայնում հասարակական ճանաչման և արձագանքի միջոցով: Դա չափազանց անհրաժեշտ մոտեցում է: Ցեղասպանությունների անտեսված զոհերի հիշողության համար համապատասխան շրջանակի ստեղծումը կարիք ունի նրանց հասարակական ճանաչման: Դա առանձնապես վերաբերում է Հայոց ցեղասպանության զոհերին հիշելուն, քանի որ այդ ցեղասպանության զոհերին հիշելը ոչ միայն հիշատակի և փորձառության վերարտադրության

պայմանագրային վավերացման բացակայության պատճառով է դժվարանում, այլև, դրա հետ մեկտեղ, ոճրագործների հետնորդ հասարակության՝ պետության ժխտման ռազմավարական քաղաքականությամբ: Այդ ժխտողական քաղաքականությունը հանգեցնում է ոչ այլ ինչի, քան նրան, որ բացառվում է զոհի զոհ լինելը, և այն իրադարձությունը, որի զոհերն են նրանք դարձել, վերածվում է չեղյալության: Այսինքն՝ նրանք, որպես զոհեր, ոչ միայն չեն կարող հիշվել, այլև իբրև զոհեր նրանց գոյությունը ժխտվում է:

Հասարակական ճանաչումն, այսպիսով, կոլեկտիվ բռնության և ցեղասպանության անտեսված քաղաքացիական զոհերին հիշելու և հիշատակի համապատասխան շրջանակի ստեղծումը հնարավոր դարձնելու հույժ կարևոր նախադրյալ է:

Այն հանգամանքը, որ նման ճանաչումը մերժվում է Հայոց ցեղասպանության զոհերին, առավել ևս զարմանալի և աններելի է, քանի որ, նացիոնալ-սոցիալիզմի և Հոլոքոստի փորձառությանը համապատասխան, սկսել էր ձևավորվել անտեսված զոհերի փորձառության և հիշատակի ընդլայնման ու հասարակական ճանաչման մի այդպիսի շրջանակ, որը միաժամանակ դարձավ հիշողության քաղաքական հրամայականի կենտրոնական օղակ: Պատերազմի և բռնության, ազգայնականության և ռասիզմի փորձառության հիշողությունը պետք էր որ 1945-ից հետո Եվրոպայի վերաձևավորման համար հիմնական նշանակություն ունենար: Զոհերի հիշողությանն առանցքային դեր էր հատկացվում Եվրոպայում ժողովրդավարական քաղաքացիական հասարակությունների ձևավորման հիմքում: Դրանով նշանավորվում էր հեռացումը եվրոպական անտիկ շրջանից գործող՝ չհիշման, ներման և մոռացության պարադիգմից (հարացույցից), որն, իմիջիայլոց, Քրիստոսից առաջ 44 թվականին, Կեսարի սպանությունից կարճ ժամանակ անց ձևակերպել էր Ցիցերոնը. «Երկպառակությունների ողջ հիշողությունը պետք է ջնջվի հավերժական մոռացու-

թյամբ», որով պիտի «հիմք ստեղծվի խաղաղության» համար [6]: 1945-ից հետո, այնուհանդերձ, առաջին անգամ պետք է խաղաղության հաստատումը հիմնվեր ոչ թե նախընթաց թշնամանքի, երկպառակության և բռնության, այլ դրանց զոհերին հիշելու պարտավորվածության վրա: Դրանով հաստատվել էր *հիշողության* մի նոր հարացույց:

Հիշողության այդ *հարացույցը* պետք է գործեր նաև աշխարհաքաղաքական ոլորտում: Այն պետք է նոր գլոբալ ըմբռնված աշխարհի համար կարգավորման ուղենիշ լիներ:

Դանիել Լևին և Նաթան Շնայդերն իրենց 2001թ. հրատարակված «Հիշողությունը գլոբալ դարաշրջանում» ուսումնասիրության [7] մեջ մատնանշել են գլոբալացման մարտահրավերները կոլեկտիվ բռնության զոհերի՝ 1945 թվականից հետո պարտադիր համարվող հիշողության համար: Առանձնապես վերազգային (*transnational*) փոխներհյուսումները և մրցակցող կենսակերպերի ու փորձառությունների շարունակական մերձեցումը վիճարկելի են դարձնում մինչ այժմ պարզորոշ կերպով ազգային և տարածաշրջանային նկարագիր ունեցող և պարտադիր համարվող հիշողությունը (և հիշողության բովանդակությունը): Այն փոփոխությունները, որոնք ընդսմին տեղի են ունենում անհատի գիտակցության մեջ, Լևին և Շնայդերը բնութագրել են որպես «ներքին գլոբալացման» գործընթաց, որն, ի վերջո, հանգեցնում է մարդկանց ինքնագիտակցության կոսմոպոլիտացմանը կամ գլոբալացմանը [7, S. 18-24, 33ff]:

Արտաքին և ներքին գլոբալացման, ներառյալ՝ մարդկանց ինքնագիտակցության գլոբալացման կամ կոսմոպոլիտացման հետևանքների պարագայում ազգային-պետական սկզբունքների հիման վրա կազմակերպված հիշողությունը չի կարող երկար ժամանակ արդիական և կենսունակ լինել [7, S. 22f]: Այդ ազգային-պետական սկզբունքներով կազմակերպված հիշողության կամ «ազգային հիշողության» փոխարեն առաջ է քաշվում «կոսմոպոլիտական» հիշողության հայե-

ցակարգը, որտեղ տեղայնացումը և գլոբալացումը պետք է խաչաձևվեն միմյանց հետ: Լևին և Շնայդերն այդօրինակ կոսմոպոլիտական հիշողության կրողներ են համարում սփյուռքի համայնքները, որոնք իրենց կառուցվածքով իսկ համապատասխանում են տեղայնացման և գլոբալացման այդ դիալեկտիկական առնչությանը [7, S. 24f]:

Այդ տեսակետներին ավելի ուշ դարձյալ կանդրադառնանք, քանի որ 2001 թվականը (երբ լույս տեսավ Լևիի և Շնայդերի ուսումնասիրությունը) նշանավորում է նաև 1945-ից հետո հաստատված կամ առնվազն ծրագրված հիշողության հարացույցի մի մեծ բեկում, դրա վերանայում:

Իսկ այդ վերանայումը կապված է այն փոփոխությունների հետ, որոնք 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո տեղի են ունեցել քաղաքականության մեջ: Այն տեսակետը, որ սեպտեմբերի 11-ը փոփոխել է աշխարհը, ոչ այլ ինչ է, քան սնանկ մի դարձվածք: Սեպտեմբերի 11-ը, անշուշտ, ոչ թե աշխարհի նոր *վերակարգավորում* է առաջ բերել, այլ փոփոխել է այն սկզբունքները, ըստ որոնց՝ աշխարհը պետք է *վերակարգավորվի* և *վերակարգավորվելու* է:

Բարեկամության և թշնամանքի նոր եզրագծեր են որոշարկվել, ախտորոշվել են հակամարտության նոր դաշտեր և սահմաններ, հաստատվել են միջազգային, նաև ռազմական ներխուժումների օրինականացման նոր փաստարկումներ: Դրանք միայն որոշ փոքրաթիվ գործոններ են, որոնցից ակնհայտ է դառնում, որ 2001թ. սեպտեմբերի 11-ը միջազգային քաղաքականության մեջ շրջադարձ է ի հայտ բերել: Արդարև, այդ շրջադարձը միգուցե ամենևին էլ շատ չի վերաբերում միջազգային քաղաքական գործողությունների իրական քաղաքական դիտավորություններին և նպատակներին, քանի որ այստեղ շարունակում է խոսվել ավանդական առաջատար քաղաքական ձգտումների մասին: Դրանց այսօր մասամբ միայն ավելի բացորոշ և վճռականորեն են հետամուտ լինում, քան նախորդ տասնամյակներին:

Սեպտեմբերի 11-ը, այնուհանդերձ, պարզորոշ շրջադարձ է նշանավորում միջազգային քաղաքականության քաղաքական փաստարկումների և հեռանկարների առումով: Միջազգային քաղաքականության հեռանկարներում այդ շրջադարձն առանձնապես տեսանելի է դառնում այն իրողությամբ, որ այսօր շարունակ ավելի նվազ չափով է նշանակություն տրվում «հիշելու» գործոնին՝ որպես քաղաքական հիմնադրույթի: Հակառակ դրան՝ առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում «անվտանգության» և «կայունության» գաղափարներին:

Միաժամանակ, արդեն 1990-ական թթ. կեսերից տերությունների հայացքը հարաճուն կերպով բևեռված էր, այսպես կոչված, համաշխարհային վտանգների վրա: Պետության և ժողովրդավարության թուլության արձանագրման հետ մեկտեղ ուշադրություն է հրավիրվում, իմիջիայլոց, կրոնական արմատականության, միջազգային ահաբեկչությունների, համաշխարհային ռեսուրսների (ջուր, նավթ) նվազման կամ կլիմայական հիմնախնդիրների ու աղետների վրա: Զուգահեռաբար, սակայն, սկզբնապես երևան են գալիս նաև զարգացումներ, որոնք, կարծես, կապված են հիշողության հարացույցի հետ: Օրինակ, քրեական գործերի միջազգային դատարանի հիմնումը կամ նաև Հարավսլավիայի՝ պատժիչ դատարանի եռանդուն գործունեությունը խոստանում էին մի նոր գլուխ բացել ընդհանուր վճռականությամբ ցեղասպանական հանցագործության դեմ հանդես գալու խնդրում՝ այդպիսով փաստելով, թե զգայուն են ցեղասպանական փորձառությունների հանդեպ:

«Կոլեկտիվ հիշողության» կամ «հիշողության մշակույթի» վերաբերյալ 1980-ական թթ. վերջից սկսված քննարկումները նույնպես կարծես խոստանում էին աշխարհի պատմության մեջ առաջին անգամ հատուկ տեղ հատկացնել զոհերի հիշողություններին, ըստ այդմ՝ հենց զոհերին: Հիշեցնեմ այդ քննարկումների մի քանի հերոսների, ինչպես, օրինակ, Յազկուս լը Գոֆի, Պիեռ Նորայի կամ Գերմանիայում, մասնավորապես, Ալեիդա և Յան Ասմանների անունները:

Այն տպավորությունը, թե նորասկիզբ 21-րդ դարի համաշխարհային քաղաքականությունը պետք է բնութագրվեր նոր բացորոշությամբ և հասուն բարոյական բանականությամբ ու պատասխանատվությամբ, այնուհանդերձ, խաբուսիկ էր: Կարևոր է այդ համատեքստում հստակ պատկերացնել, թե իրականում ինչ էր նշանակում հիշողության և հիշողության մշակույթի շեշտադրումը: Եթե առավել ճշգրիտ հայացք նետենք այն քաղաքական քննարկումների վրա, որոնցում «հիշողություն» կատեգորիան ծառայում է որպես առանցքային ուղղորդիչ, ապա անմիջապես պարզ կդառնա մի բան. քննարկումներում դիտարկվող պատմական պատասխանատվությունը միայն խիստ մասնակիորեն է համապատասխանում հետապնդումների և բռնության, պատերազմների և հալածանքների *հիշողության պատասխանատվությանը,* որից զոհերի հանդեպ ևս առանձնահատուկ պատասխանատվություն է բխում:

Եվրոպական նկարագիր ունեցող այդ հիշողության քաղաքականության դեպքում խնդիրը, ավելի շուտ, վերաբերում է իշխանության չարաշահման հիշողությանը, ժողովրդավարության ճեղքվածքներին կամ քաղաքականության մեջ ներմուծված թշնամիների կերպարներին:

Եթե խոսքը վերաբերում է «հիշողությանը», ապա դա ամուր կապված է քաղաքականության մի որևէ առանձնահատուկ ձևի հետ: Այդ քաղաքականության մեջ պետք է *կառուցվի* բոլորի համար պարտադիր, գլոբալ հիշողություն, որի համար առանձին փորձառությունների բազմազանությունը բնավ էլ առանցքային դեր չի խաղում: Ընդհակառակը, առկա է համընդհանուր կիրառելի և առանձնահատուկ փորձառություններից ձերբազատված «հիշողության»՝ որպես *բարոյական հրամայականի* շահագրգռվածություն:

Հիշողության՝ որպես բարոյական հրամայականի հայեցակարգի առանցքում է գտնվում *Հոլոքոստը,* ընդ որում՝ ուշադրությունն, ան-

շուշտ, այլևս առաջին հերթին չի բևեռվում նացիոնալ-սոցիալիստական բռնության քաղաքականության կառուցվածքի կամ դրա զոհերի վրա: Հայացքն, ավելի շուտ, ուղղվում է Հոլոքոստի՝ որպես ընդհանրական խորհրդանշի կարգավիճակի վրա:

Նկատի ունենք մի խորհրդանիշ, որը բոլորի և յուրաքանչյուրի համար ըմբռնելի և գլոբալ հայեցակարգի շրջանակներում բարոյապես պարտադիր է: «Հոլոքոստի» բարոյական *ընդհանրացած* ընկալման մեջ պետք էր բռնության բոլոր փորձառությունները տարրալուծվեին, իսկ ապագա բռնությունները՝ խափանվեին: Հիշողության քաղաքականության այդ ռազմավարությունը, անշուշտ, ունի խոր հետևանքներ հենց Հոլոքոստի հիշողության համար: Քանի որ նման ընդհանրացումը կհանգեցնի նրան, որ Հոլոքոստի հետ կապված հիշողությունն իր սեփական անմիջական համատեքստից դուրս բերվի, դրա հիմքում ընկած փորձառությունից հեռացվի և այդպիսով, ի վերջո, պարպվի [8]:

Այդ առումով բնութագրական է 2000-ին Հոլոքոստի վերաբերյալ տեղի ունեցած միջազգային նստաշրջանի Ստոկհոլմյան հայտարարությունը, որը ստորագրել են բազմաթիվ եվրոպական պետություններ, ԱՄՆ-ը, Կանադան և մի քանի այլ պետություններ, և որը պետք է ձևակերպեր Հոլոքոստը հիշելու որոշակի պարտադիր ցուցում [9]: Հայտարարության մեջ ընդգծվում է «ընդհանրական նշանակությունը», որը «մեկընդմիշտ բնութագրական է Հոլոքոստի համար» և առանցքային է դարձվում նրա՝ որպես «քաղաքակրթության անօրինակ փլուզման» որակական հատկանիշը: Այն ընկալվում է որպես իրադարձություն, որում հարացուցային կերպով ի հայտ է գալիս մարդու չարագործության, ինչպես նաև բարեգործության ունակությունը: Այնուհետև (միանգամայն հերոսական ասքաբանության, նահատակության և *Sacrificium*-ի *տրամաբանությամբ*) առանձնակիորեն շեշտվում է նրանց «ինքնուրաց զոհաբերությունը», ովքեր դիմադ-

րություն են ցուցաբերել նացիոնալ-սոցիալիզմին և, իրենց կյանքը վտանգելով, պաշտպանել են Հոլոքոստի զոհերին:

Ուշագրավ է, թե այստեղ ինչպես են ընդունվում և առադրվում *Sacrificium*-ի և *Victimus*-ի՝ զոհի կատեգորիաները. մի կողմից՝ ինքնուրաց, ակտիվ, հերոսական զոհը, որն առանձնահատուկ կերպով մեծարվում է, և մյուս կողմից՝ Հոլոքոստի անտեսված, պասիվ զոհը, որի համար հերոսներն անձնազոհաբար իրենց կյանքն են տվել:

8 կետ պարունակող Ստոկհոլմյան հայտարարության միայն 6-րդ կետում է ձևակերպվում Հոլոքոստի բուն զոհերին՝ Եվրոպայի սպանված հրեաներին հիշելու պարտավորությունը, ընդ որում՝ այդ պարտավորությանը դարձյալ անմիջաբար զուգակցվում է դիմադրության շարժման մարտիկներին մեծարելու պարտավորությունը: «Մենք ընդհանրական պարտավորություն ունենք պահպանել Հոլոքոստի զոհերի հիշատակը և մեծարել նրանց, ովքեր դրան դիմադրություն են ցույց տվել»:

Հոլոքոստի ընդհանրականացված հիշողության առանցքում, այսպիսով, զոհերը չէ, որ գտնվում են, այլ պատմական փլուզումը և դիմադրության գործիչները՝ նահատակներն ու հերոսները: Այդպիսով՝ հիշողության քաղաքականության ընդհանրականացման գործընթացում *հիշողությանը,* որն իրականում վերակառուցման *դինամիկ, կենսալի* գործընթացի միջոցով շարունակում է պահպանվել, փոխարինում է *հիշատակը:*

Դրանով էական տարբերակում է կատարվում՝ տարբերակում *հիշողության* և *հիշատակի* միջև, որին կկամենայինք մի փոքր ավելի հանգամանալից անդրադառնալ [10]:

Հիշողությունը շարադրանք է, որը հիմնվում է փորձառությունների վրա՝ նույնքան ուղղակի, որքան անուղղակի՝ փոխանցվող փորձառությունը: Հիշողությունները կողմնորոշումներ են, որ միշտ գործ ունեն ինքնության ճանաչման հետ: Հիշողությունը միշտ կապված է այն *կրողների* հետ:

Հիշատակը, հակառակը, հետևում է պատմության և ինքնության ճանաչման կրճատմանը: Հիշատակը, առաջին հերթին, պետք է ոչ թե պահպանի, այլ պետք է ինտեգրի, ներդաշնակի համատեղ, ընդհանրական «արժեքները»:

«Հիշողությունը» չի կարող *ընդհանրական* լինել, իսկ «հիշատակն» էլ կարող է միայն այն ժամանակ ընդհանրական լինել, եթե *զերծ է հիշողությունից*, եթե ձերբազատվում է այն փորձառություններից, որոնք պահպանված են վերարտադրության մեջ:

Փիլիսոփա և քաղաքագետ Էնզո Տրավերսոն ընդհանրացված հիշատակի հաստատման հիշողության քաղաքական ռազմավարությունը նկարագրել է որպես անցյալի որոշակիացում [11]: Անցյալը, ընդսմին, վերածվում է գեղագիտական, չեզոք և, ի վերջո, նաև շահութաբեր սպառման արտադրանքի, որը յուրացվում և օգտագործվում է զբոսաշրջային և սպառողական մշակույթի կողմից [11]:

Տրավերսոյի քննությունը, որն ակնհայտորեն աղերսվում է Ադորնոյի՝ մշակույթի քննադատության հետ [12], կարող է փոքր-ինչ սուր և բանավիճային տպավորություն թողնել: Եվ այնուամենայնիվ, այնտեղ լուսաբանվում են մի քանի կարևոր տեսակետներ. մի կողմից՝ անցյալի հանրահայտ *որոշակիացումը,* որ *ակնթարթ* է դառնում հուշարձանների տեսքով, և մյուս կողմից՝ Տրավերսոն մատնանշում է *փորձառության և կենդանի հիշողությունների գեղագիտական վերացարկման միտումը,* որի ընթացքին զուգահեռ՝ փորձ է արվում անցյալը ներկայացնել ընդհանրական առումով հասկանալի և պարտադիր սիմվոլիկայի մեջ և ամրապնդել ֆրազային ցեմենտումով [11, S. 8]:

Ի՞նչ հետևություններ կարելի է կատարել այս քննությունից հայկական հիշողության ուղղորդման առումով: Ի՞նչ հետևանքներ ունեն հիշողության այդ քաղաքականության կառուցվածքները մեզ համար: Հիշողության ի՞նչ քաղաքական ռազմավարություններ կարող ենք ինքներս զարգացնել մեզ այդ գլոբալ կամ, առնվազն, եվրոպական հիշողության համակարգում տեղորոշելու համար:

Այդ հարցերին պատասխանելու համար կարևոր է, մի կողմից՝ մեկ անգամ ևս աչքի առաջ ունենալ եվրոպական հիշողության քաղաքականության հիմունքները և գործառույթը: Եվ բացի այդ, պետք է հարց տալ, թե հիշողության այդ քաղաքականության որոշակի հայեցակարգերը որչա՞փ հրատապորեն են առարկայանում ընդլայնված՝ Արևելյան և Հարավային Եվրոպայում:

Արդեն մատնանշել ենք, որ հիշողության գլոբալ-եվրոպական քաղաքականության կիզակետում ընկած է նացիոնալ-սոցիալիզմի, Երկրորդ աշխարհամարտի և, մասնավորապես, Հոլոքոստի փորձառությունը:

Այդ փորձառության հետնապլանում նոր Եվրոպան պետք է ձերբազատվեր եվրոպական տերությունների մրցակցության ավանդույթից, ինչը հարյուրամյակներ ի վեր որոշիչ է եղել Եվրոպայի պատմության համար: Նկատի ունենալով 20-րդ դարում բռնությամբ կիրարկված իրադարձությունները՝ ապագայում խաղաղությունն ապահովագրելու համար պետք է հաստատվեր համատեղ եվրոպական ինքնություն: Այդպիսով, կյանքի կոչվեց հիշողության մշակույթ, որը պատմության և պատմական փորձառության անդրադարձի միջոցով պետք է կազմեր խաղաղությամբ և ժողովրդավարությամբ հատկանշվող համատեղ ապագայի հենք: Վերակողմնորոշումը դեպի «հիշողությունը», այսպիսով, սկզբից ևեթ գործառապես կապված էր եվրոպական ինքնության հաստատման քաղաքականության հետ, և այդ կապն առայսօր գործում է:

Դա վերջերս ընդգծել է նաև միջազգային մեծ ճանաչում ունեցող գերմանացի քաղաքագետ Կլաուս Լեգևին, երբ մատնանշում էր այն հանգամանքը, որ միացյալ Եվրոպան (տնտեսական կապերից անդին) կարող է միայն այն ժամանակ գործառունակ լինել, եթե այն ունենա տարորոշված հիշողություն, եթե լինեն հիշողության ընդհանուր կերպով տարորոշված բովանդակություններ և վերարտադրություններ [13]:

Լեգևին հիշողության այն քաղաքականության համար, որի նպատակն է հասնել այդպիսի եվրոպական հիշողության և, ըստ այդմ, եվրոպական ինքնության հաստատմանը, նախագծել է հետաքրքիր հայեցակարգ, որում ներառված են պատմության տարբեր փորձառություններ և տեսակետներ: Լեգևին, ընդսմին, առաջարկում է յոթ համակենտրոն շրջանների՝ ձևով եվրոպական հիշողության կազմակերպման հայեցակարգը, որոնք պետք է սահմանադիր նշանակություն ունենան եվրոպական քննական հիշողության մեջ: Այդ յոթ շրջանները միաժամանակ առարկայանում են որպես հիերարխիկ կարգավորում [13, S. 15-48]:

Հիշողության այդ համակենտրոն համակարգի առանցքը (որպես Եվրոպայի բացասական վերակարգավորման առասպել) կազմում է Հոլոքոստը [13, S. 15ff]: Այդ կենտրոնի շուրջ տեղադրված են վեց ուրիշ շրջաններ, որոնցից *երկրորդը* պետք է հաստատագրի ստալինիզմի և Գուլագի փորձառությունը [13, S. 21ff]: Որպես երրորդ շրջան հետևում է էթնիկ զտումների և տեղահանությունների փորձառությունը՝ իբրև համաեվրոպական տրավմա [13, S. 27ff]: Այդ շրջանում Լեգևին տեղադրում է ոչ միայն 1945-ից հետո տեղի ունեցած գերմանացիների վտարումը Եվրոպայի արևելքից, այլև, ինչպես ինքն է ձևակերպում, «Հայկական հարցը»: Ուշագրավ է, որ Լեգևին եվրոպական հիշողության քաղաքականությանը վերաբերող իր նախորդ կշռադատումներում «Հայկական հարցը» տեղադրել էր չորրորդ՝ «Պատերազմի և ճգնաժամի փորձառություններ» շրջանում, սակայն իր մենագրությունում այն տեղադրում է «Տեղահանում և էթնիկ զտումներ» թեմատիկ կատեգորիայի մեջ և դրան, մասնավորապես, անդրադառնում է ԵՄ-ի դեպի հարավ և արևելք ընդլայնման առնչությամբ, բացի դրանից՝ նաև իսլամի ու աշխարհականացած Եվրոպայի միջև շփման կամ կոտորակային գծի համատեքստում [13, S. 30-31]: Լեգևին միաժամանակ «Հայկական հարցը» որոշակիորեն

դիտարկում է որպես խանգարիչ գործոն «մեծ Եվրոպայի» ներսում, որը «Հայկական հարցի պատճառով հիշողության մշակույթի առումով պառակտվում է, նախքան, առհասարակ, ի մի կգա որպես մի ամբողջություն» [13, S. 30]: Այդպիսով 1915-16թթ. եղելություններին ոչ միայն «ցեղասպանության» որակն է հաղորդվում՝ որպես անվիճելի չափորոշիչ, այլև դրան ամենից առաջ կարևոր նշանակություն է տրվում Եվրոպական միությանը Թուրքիայի անդամակցության գործընթացի համատեքստում:

Լեգևին եվրոպական հիշողությունների չորրորդ շրջանն անվանում է «պատերազմի և ճգնաժամի հիշողություններ», որոնք նա ընկալում է որպես Եվրոպայի միավորման շարժիչ, իսկ հինգերորդ շրջանը նվիրված է «Եվրոպայի ծայրամասերին»՝ գաղութային հանցագործություններին, ստրկությանը, ընդհուպ մինչև ներկայիս նորագաղութային տնտեսական քաղաքականություններին: Հիշողության վեցերորդ շրջանը Եվրոպան նկարագրում է որպես ներգաղթի մայրցամաք, իսկ յոթերորդ շրջանն, ի վերջո, ներկայացնում է 1945 թվականից սկիզբ առած Եվրոպայի «հաջողությունների պատմությունը», փոխըմբռնման քաղաքականությունը և միավորման խաղաղ գործընթացը [13, S. 45ff]:

Այդ մոդելում տեսնում ենք, որ այն մի կողմից միավորիչ բնույթ ունի՝ համատեղելով տարբեր փորձառություններն ու հեռանկարները: Մյուս կողմից՝ այն ունի միակենտրոն բնույթ. տարբեր փորձառությունները, որոնք վերագրվում են եվրոպական հիշողության կանոնին, կարգավորվում են հիերարխիկ համակարգում, որի կենտրոնում գտնվում է Հոլոքոստը [13, S. 14]:

Եվրոպական հիշատակի 7 շրջանակները



Այժմ կարելի է համեմատաբար դյուրին կերպով արձանագրել, որ հիշողության այդ քաղաքական հայեցակարգը խիստ ընդգծուն կերպով արևմտաեվրոպական հեռապատկերի տեսանկյունից է մտահղացվել և այդպիսով միանգամայն եվրակենտրոն է:

Այլ հեռապատկերների տեսանկյունից դիտարկելիս նման համակենտրոն դաշտը բոլորովին այլ կերպ կառարկայանա: Օրինակ, Աֆրիկայի սևամորթ ստրուկների տեսանկյունից նման համակարգի կենտրոնում, անկասկած, նախևառաջ առևանգման և ստրկության պատմությունն ու փորձառությունն էին հանդես գալու:

Եվրոպական հիշողության մշակույթի բազմակենտրոն հայեցակարգի հնարավոր շրջանակները (Մ.Դաբաղ)



Կարծում ենք, որ հիշողության հայկական քաղաքականությունը հենց այդ կետում է, որ պետք է զարգանա: Մենք պետք է պարզորոշ դարձնենք հիշողության այդպիսի ընդհանրացնող և միակենտրոն քաղաքականությունների անկատարությունն ու անփոխադրելիությունն ուրիշ երկրամասեր՝ այդպիսով մատնանշելով ընդհանրացման հետևանքով փորձառության պարպման վտանգները: Պետք

է դրան հակադրենք հիշողության մի այնպիսի քաղաքական հայեցակարգ, որը կընդգծի հիշողության տարածքների բազմակենտրոնության անհրաժեշտությունը: Պետք է ներկայացնենք առանձին փորձառությունների սեփական կշիռը և գրավիմետրիկ դաշտերը, որոնք, ըստ հանգամանքների, սահմանում են սեփական հիշողության շրջանները և մատնանշում կողք կողքի գտնվող շրջանների հատման տիրույթները հիշողության բազմակենտրոն տարածքում:

Օրինակ, Եվրոպայի՝ դեպի Հոլոքոստը բևեռված հիշողության քաղաքականության պարագայում ակնառու է, որ այդ հայեցակարգն ուժգին կերպով կենտրոնացված է 1945թ. և Երկրորդ աշխարհամարտի վրա: Առաջին աշխարհամարտը, որը շատ պատմաբաններ իրավամբ բնութագրել են որպես 20-րդ դարի առաջին աղետը, այդ հայեցակարգում միայն եզրային տեղ է զբաղեցնում (Լեգևիի նախագծում այն միայն չորրորդ շրջանում է): Միաժամանակ, Առաջին աշխարհամարտը պետք է ըմբռնել իբրև Եվրոպայի պատմության կենտրոնական, հավանաբար, հենց ամենաառանցքային իրադարձությունը, որտեղ պարադիգմատիկ ձևով խտանում էր ազգային պետությունների դարաշրջանը՝ որպես ազգային և ազգային-իմպերիալիստական շահերի հակասությունների և հակամարտությունների բռնի պարպում, որի ընթացքին առաջին անգամ ցեղասպանությամբ փորձ արվեց միատարր ազգային պետության մոդելն իրականացնել: Սրա զոհը դարձավ արևմտահայությունն Օսմանյան կայսրության մեջ: Առաջին աշխարհամարտով Եվրոպայում տեղի ունեցավ նոր վերաձևավորում, որն, առհասարակ, ճանապարհ բացեց 20-րդ դարի առաջին կեսի տոտալիտար ռեժիմների համար, և որի հետևանքները մինչև այսօր առկա են Եվրոպայում և աշխարհում: Ըստ այդմ՝ 1914-18թթ. իրադարձությունները և դրանց թվում՝ 1915-16թթ. իրադարձություններն ունեն մեծագույն նշանակություն 20-րդ և 21-րդ դարերում Եվրոպայի ձևավորման և նկարագրի հարցում:

Հայոց ցեղասպանությունը, միաժամանակ, պետք է ընկալել որպես կիզակետային իրողություն այդ առաջին աղետի շրջանակներում, և դա պետք է պարզորոշ դարձնել: Այն պետք է դիտարկել որպես հիշողության բազմակենտրոն համակարգի կենտրոններից մեկը, քանի որ Հայոց ցեղասպանությունը պետք է ընկալվի որպես Փոքր Ասիայի, Կովկասի և Բալկանների «վերաձևավորման» և այդ տարածաշրջանում ազգային և ազգային-պետական գաղափարի՝ որպես հասարակական ընկերակցության ժամանակակից և միակ թույլատրելի ձևի, իրագործման գրավիմետրիկ կենտրոնը: Այն մի նոր վերաձևավորման, այն է՝ չձուլվող համարվող ազգային խմբի լիակատար ոչնչացման միջոցով բնակչության, տարածքի և տիրապետության ինքնության նորովի հաստատմամբ միատարր ազգային պետության ստեղծման բռնի փորձի օրինակ է ծառայում: Ըստ այդմ՝ Հայոց ցեղասպանությունը պարադիգմատիկ տեղ է զբաղեցնում բռնի կերպով ազգային պետության ստեղծման համատեքստում, ինչի պատճառով այն ձևավորում է համակենտրոն շրջանների դաշտ և պետք է տեղակայվի հիշողության շրջանի առանցքում, ընդ որում՝ այդ շրջանը տարբեր հարթություններում պարզորոշ համընկնում է հիշողության՝ Եվրոպայի հոլոքոստակենտրոն շրջանի հետ:

Մի կողմից՝ այն համընկնում է պատմական նկարագրի առումով, քանի որ Հայոց ցեղասպանությունն իրականացվեց Առաջին աշխարհամարտի ստվերի ներքո՝ *Եվրոպայում տեղի ունեցող զարգացումների շրջապտույտում:* Դա համընկնումի առաջին հարթությունն է:

Երկրորդ հարթությունը բնաջնջման սիստեմատիկ բնույթն է. հայկական փորձառությունը գտնվում է ազգության՝ եվրոպական ազգային պետության մոդելի պարադիգմային ընդհանրացման և Եվրոպայի ծայրամասերում ազգերի ձևավորման գործընթացների իրականացման կենտրոնում:

Այդ երկու տեսակետները կազմում են բազմակենտրոնությանն ուղղված՝ հիշողության քաղաքականության կարևոր ձգողական կետերը, ընդ որում՝ դրանք այդ իրողության նշանակությունը ցուցադրում են ոչ միայն տեղական և տարածաշրջանային, այլև ընդհանրական ընդգրկման մասշտաբով:

Հիշողության՝ բազմակենտրոնության տանող գլոբալ դաշտում հայկական փորձառության այդ ընդհանրական ընդգրկումն, ըստ իս, պետք է դառնա հիշողության ապագա հայկական քաղաքականության առաջնահերթ խնդիրը: Իսկ դա իրականացնելու համար անհրաժեշտ է հայկական փորձառությունն ամբողջացնել, մշակել և կառուցողական կերպով ներմուծել բազմակենտրոնությանն ուղղորդվող համաշխարհային իրականության մեջ:

Բացի դրանից՝ թույլ չտալ, որ հայկական փորձառության վերաբերյալ քննարկումը մղվի դեպի ազգայնական դատողությունների հետնախորշը:

Գլոբալացման գործընթացում ազգային պետությունների հետ մեկտեղ հարաճուն կերպով ի հայտ են եկել նաև վերազգային և անդրազգային կառույցներ ու դերակատարներ, որոնք ազգային-պետական հեռանկարների նշանակությունը շարունակ ավելի են սահմանափակում: Հիշողության վերարտադրման նվազեցումը կամ նրա պատենավորումը ազգային հայեցակարգում, այդ առնչությամբ, նշանակում է նրա տիրույթի էական սահմանափակում: Անդրազգային դարաշրջանում, որում ապրում ենք, պարտավոր ենք հիշողության մեր քաղաքականությանը հաղորդել նաև անդրազգային ուղղորդվածություն և պարզաբանել մեր փորձառության՝ մեր կողմից արտապատկերված անդրազգային նշանակությունը:

Անշուշտ, հայերը, մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության միջոցով և, մյուս կողմից՝ ի դեմս աշխարհասփյուռ հայության, ունեն

դերակատարներ թե՛ ազգային-պետական, թե՛ անդրազգային հարթությունների վրա, և այդպիսով ունեն նաև հիշողության անդրազգային քաղաքականության որոշակի կրող, որը չափազանց հմուտ է գլոբալ աշխարհի անդրազգային կառույցների հետ փոխհարաբերման հարցում, և հենց ինքն էլ դրա հետ համեմատելի կառույց է ներկայացնում: Սփյուռքը, որպես ապակենտրոն կառույց, աշխարհի կենտրոնների բնակիչ, կարող է դառնալ բազմակենտրոն հիշողության հայեցակարգի կրող:

Ազգերը համեմատաբար կարճ ժամանակահատվածով՝ մոտ 200 տարով իշխել են պատմությանը, ձևավորել են հիշողության հարացույցները և կրել դրա վերարտադրման գործառույթը: Այսօր՝ անդրազգային փոխներհյուսումների ժամանակներում, երևան է գալիս անդրազգային, վերազգային, գլոբալ հիշողությունը, և մշակվում են հայեցակարգեր այդ գլոբալ հիշողությանը քաղաքական ձևավորում տալու համար: Հոլոքոստի՝ որպես ընդհանրական հիշողության ատյանի, նախագծումը, որի մեջ պետք է ներառվեն բռնության գործադրման բոլոր փորձառությունները կամ եվրոպական հիշողության՝ Կլաուս Լեգևիի կողմից պատկերված շրջանները, պարզորոշ կերպով դրան են ուղղորդված: Ճիշտ կվարվենք, եթե ընդունենք ժամանակի ազդանշանները, մեր քաղաքականությունը զարգացնենք դրան համապատասխան և այդ հայեցակարգի քաղաքական կրողներին՝ ի դեմս հայ սփյուռքի, տևականորեն հզորացնենք: Հիշողության հայկական քաղաքականության առաջադրանքն ապագայում պետք է լինի այն, որ այն այլևս չպետք է մղվի դեպի թուրքական ժխտողական քաղաքականության տրամաբանության ոլորտը, այլ ակտիվ և կառուցողական կերպով թափանցի այն դիսկուրսի, վիճարկումների մեջ, որ առկա են Արևմուտքում, մասնակցի այդ քննարկումներին և իր ներդրումն ունենա դրանց մտավոր և հայեցակարգային զարգացման մեջ: Վերոնշյալ փաստարկումներն այդ ուղղությամբ ընթացող

ճանապարհը նկարագրելու փորձ են: Այդ պատճառով ստորև ամփոփ ներկայացնում ենք առանցքային, դեռևս ամբողջացման ենթակա տեսակետները:

Մայիս, 2013թ.

Գերմաներենից թարգմանեց
դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Հայրունին

Աղբյուրներ և գրականություն

1. *Կարլ Մարքս,* Բանավեճ փայտագողությանը վերաբերող օրենքի մասին: Հրատարակված Հռենոսի երկրամասի մի բնակչի կողմից, „Rheinische Zeitung“, 305, 1842թ. նոյեմբերի 1:
2. *Benjamin, Walter:* Über den Begriff der Geschichte (1939), in: ders.: Gesammelte Schriften, Bd. I.2, hrsg. Von Rolf Tiedemann und Hermann Schweppenhäuser, Frankfurt am Main 1991 692-704, hier S. 696.
3. *Schmitt, Carl:* Die Buribunken, in: Summa. Eine Vierteljahresschrift 2, 4, 1918, S. 89-106, hier S. 102.
4. *Burke, Peter:* Geschichte als soziales Gedächtnis, in:Mnemosyne. Formen und Funktionen der kulturellen Erinnerung, hrsg. von Aleida Assmann und Dietrich Harth, Frankfurt am Main 1991, S. 289-304.
5. *Assmann, Aleida:* Der lange Schatten der Vergangenheit. Erinnerungskultur und Geschichtspolitik, München 2006, S. 72ff.
6. *Meier, Christian:* Das gebot zu vergessen und die Unabweisbarkeit des Erinnern. Vom öffentlichen Umgang mit schlimmer Vergangenheit, München 2010, S. 10.
7. *Levy, Daniel* / Sznaider, Nathan: Erinnerung im globalen Zeitalter: Der Holocaust, Frankfurt am Main 2001.
8. *Marchart, Oliver:* Umkämpfte Gegenwart. Der Zivilisationsbruch Auschwitz zwischen Singularität, Partikularität, Universalität, und der Globalisierung der Erinnerung, in: Zivilisationsbruch und Gedächtniskultur, hrsg. von Heidemarie Uhl, Innbruck 2003, S. 35-66.
9. Task Force for International Cooperation on Holocaust Education, Remenbrance und Research: Declaration oft he Stockholm International Forum on the Holocaust (2001), http://www.holocausttaskforce.org/about-the-itf/stockholm-declaration.html?lang=en, վերջին անգամ նայված՝ 07.02.2013-ին:

10. *Dabag, Mihran:* Globale Erinnerung. Neue Ordnungsvorschläge für die „historischen Irrffimer“ der Geschichte der Moderne, in: Zeitschrift der Genozidforschung 4, 2, 2003, S. 114 -129.
11. *Traverso, Enzo*: Gebrauchsanleitungen für die Vergangenheit. Geschichte, Erinnerung, Politik, Münster 2007, S. 8.
12. *Adorno, Theodor W.:* Kulturkritik und Gesellschaft, in: ders.: Gesammelte Schriften in 20 Bänden, hrsg. von Rolf Tiedemann, Frankfurt am main 1997, Bd. 10, S. 11-30.
13. *Leggewie, Claus:* Der Kampf um die europäische Erinnerung. Ein Schlachtfeld wird besichtigt, München 2011.

АРМЯНСКАЯ ПОЛИТИКА ПАМЯТИ В ЭПОХУ ГЛОБАЛИЗАЦИИ

Мигран Дабаг

Резюме

В статье затрагивается тема начатых в 1980-х гг. обсуждений относительно «коллективной памяти» или «культуры памяти», обещавших впервые в мире уделить специальное внимание воспоминаниям жертв и самим жертвам. Представлена разница между понятиями «воспоминание» и «память». Делается важное заключение: Диаспора как децентрализованная структура может стать носителем концепции мультицентровой памяти. И будет правильным принять вызовы времени, развивать нашу политику в соответствии с ними и усилить политических носителей концепции памяти в лице армянской Диаспоры. Императивом армянской политики памяти в будущем должно стать то, что она больше не должна ориентироваться на логику турецкой политики отрицания, но активно и конструктивно проникнуть в тот дискурс, дискуссии, которые существуют на Западе.

Հիշողության հայկական քաղաքականության պարամետրերը

1. Բազմակենտրոնություն միակենտրոնության փոխարեն

- Հղում դեֆիցիտներին, հիշողության միակենտրոն և եվրակենտրոն հայեցակարգերի սահմանափակ տեսադաշտն ու վտանգները:
- Հիշատակի քաղաքականության հայեցակարգի մշակում, որը շեշտում է հիշողության դաշտի անհրաժեշտ բազմակենտրոնությունը:
- Առանձին փորձառություններում սեփական կշռի և տարատեսակ գրավիմետրիկ ոլորտների ընդգծումը. փորձառություններ, որոնցից յուրաքանչյուրը ծնունդ է տալիս հիշողության իրեն հատուկ շրջանակներին:
- Այս հարակից շրջանակների փոխհատման շեշտադրումը հիշողության բազմակենտրոն դաշտում:

2. Հայկական ցեղասպանության գրավիմետրիկ դաշտը

- Առաջին համաշխարհային պատերազմի ընդգծումը՝ որպես 20-րդ դարի նախահիմքային աղետ, որպես եվրոպական պատմության կենտրոնական իրադարձություն, երբ ազգային պետությունների դարաշրջանի խնդիրները խտացվեցին պարադիգմատիկ ձևի մեջ:
- Նրա պարադիգմատիկ հիմքերի ընդգծումը՝ կապված ազգային և ազգային-կայսերական հակամարտությունների շահերի բախման բռնի ուժի օգտագործման հետ:
- Նրա պարադիգմատիկ հիմքերի ընդգծումը՝ որպես էթնիկապես միատարր բնակչություն ունեցող ազգային պետությունների ստեղծման հեռանկար: Հայկական ցեղասպանության իրականացումը՝ որպես դրա առաջին դրսևորում:

⇒ Առաջին համաշխարհային պատերազմով ազգային պետության նոր կարգ ստեղծվեց Եվրոպայում, ինչն, առաջին հերթին, հնարավոր դարձրեց 20-րդ դարի առաջին կեսի ամբողջատիրությունը, և ինչի հետևանքները շարունակում են ազդեցություն ունենալ մինչ օրս Եվրոպայում և աշխարհում:

⇒ 1914/18 թվականների և դրանց ընթացքում 1915/16թթ. իրադարձությունները մեծ կարևորություն ունեն 20-րդ և 21-րդ դարերի Եվրոպայի ձևավորման համար:

3. Հայկական ցեղասպանությունը՝ որպես էական իրադարձություն Առաջին համաշխարհային պատերազմի աղետի շրջանակներում

- Հայկական ցեղասպանությունը պետք է ըմբռնել որպես կենտրոնական իրադարձություն՝ Փոքր Ասիայի, Մերձավոր Արևելքի, Կովկասի և Բալկանների տարածաշրջանի «տրանսֆորմացիայի» գործընթացում ազգի և ազգային պետության գաղափարի իրականացման համար. կառույց, որ հասարակայնացման միակ ժամանակակից և թույլատրելի ձևն է:
- Այս համատեքստում Հայկական ցեղասպանությունը կարող է դիտվել որպես նոր վարչական կարգի իրականացման բռնի ձև:

⇒ Այսպիսով, Հայկական ցեղասպանությունն ինքնին սահմանում է համակենտրոն շրջանակների մի դաշտ կամ, ավելի շուտ հիշողության այդ շրջանակի կենտրոնն է հանդիսանում:

4. Հայկական ցեղասպանության հիշողության շրջանակը տարբեր մակարդակներում հատումներ ունի եվրոպական հոլոքոստակենտրոն հիշողության շրջանակի հետ

1. Պատմական իրադարձության մակարդակ:

Հայերի ցեղասպանությունն իրականացավ Առաջին համաշխար-

հային պատերազմի ստվերում՝ Եվրոպայում դեպքերի զարգացման ընթացքում:

2. Սիստեմատիկ մակարդակ:

Հասարակության՝ որպես ազգ ձևավորման եվրոպական պարադիգմի մեջ հայկական փորձառությունը կենտրոնական դիրք է գրավում եվրոպական ծայրամասում բռնի իրականացման իմաստով:

⇒ Այս երկու ասպեկտները կազմում են հիշողության բազմակենտրոն քաղաքականության մշակման կարևոր կենտրոնները, և նրանք ընդգծում են այդ իրադարձության ոչ թե տեղային կամ տարածաշրջանային, այլ ունիվերսալ նշանակությունը:

5. Հիշողության հայկական քաղաքականության հիմնական խնդիրը

- Հայկական փորձառության անդրազգային և համամարդկային կարևորության շեշտումը բազմակենտրոն հիշողության գլոբալ դաշտում:
- Հայկական փորձառության շուրջ քննարկումը չպետք է ընթանա ազգային և ազգայնական դիսկուրսում, և չպիտի թողնենք, որ այն քշվի այդպիսի քննարկումների անկյուն:
- Հայկական փորձառության հիշողության նարատիվի սահմանափակումը սոսկ ազգային նշանակության մեջ՝ նշանակում է նրա տեսածիրի զգալի սահմանափակում ընդհանրապես:
- Գլոբալիզացիայի և անդրազգային (տրանսնացիոնալ) ներկա միտումների լույսի ներքո հիշողության հայկական քաղաքականությունը պետք է նույնպես ուրվագծվի/ծրագրվի որպես վերազգային:

6. Հիշողության հայկական նոր վերազգային քաղաքականության կրողները

- Հիշողության վերազգային քաղաքականությունը և հիշողության մշակույթը կարիք ունեն կրողների խմբի, որը ծանոթ է տրանս-ազգային գլոբալ աշխարհին և նաև ունի բաղդատելի կառուցվածք:
- Սփյուռքը, որպես ապակենտրոն կառույց, ծանոթ է աշխարհի կենտրոններին և նրանց գործելակերպին, և կարող է հետազգային աշխարհում տրանսազգային հիշողության կրողը լինել, քանի որ այն ի վիճակի է միացնել տեղայինը և գլոբալը:
- Սփյուռքի ամրապնդումը՝ որպես հետազգային հիշողության կրողի, գլոբալ հիշողության բազմակենտրոն դաշտի մեջ: